

քաղ. Երևան
Մասնակցում էին`

Ա. Գևորգյան	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Վ. Վարդանյան	ՀՀ քաղաքաշինության նախարար
Ա. Գրիգորյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ա. Անանյան	ՀՀ վարչապետի օգնական
Կ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ
Ռ. Անտոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ
Ա. Կիրակոսյան	Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի գործադիր տնօրեն
Ա. Ղազարյան	Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության տնօրեն
Ա. Վարդանյան	«Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն
Ժ. Մարկոսյան	«Ազնավուրը` Հայաստանին» բարեգործական կազմակերպության Հայաստանի ներկայացուցչության գլխավոր տնօրեն

1. ՀՄՆՀ-ի գործադիր գրասենյակի հաշվետվությունը 2010 թվականի ընթացքում ծավալած գործունեության մասին

(Ա. Կիրակոսյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 1-ին հարցը զեկուցեց ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանը և ներկայացրեց ՀՄՆՀ-ի գործադիր գրասենյակի 2010 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը: Նա տվյալներ հաղորդեց հաշվետվու տարվա ընթացքում համայնքներից ստացված ծրագրերի առաջարկների, կնքված պայմանագրերի, իրականացված ծրագրերի, մունիցիպալ ֆինանսական վերապատրաստման և հիմնադրամի կատարած ծախսերի վերաբերյալ: Հիմնադրամի գործադիր գրասենյակը հաշվետու ժամանակաշրջանում հանրապետության գյուղական և քաղաքային համայնքներից ստացել է 45 ծրագրի առաջարկ, որոնք ՀՄՆՀ-ի ընթացակարգերի համաձայն ենթարկվել են փորձաքննության: 2010 թվականի ընթացքում հիմնադրամը ծրագրերի իրականացման վերաբերյալ համաձայնագրեր է կնքել 47 համայնքների հետ: 2010 թվականի ընթացքում ծրագրերի շինարարական աշխատանքների կատարման համար կապալառու կազմակերպության` մրցույթի կամ աճուրդի եղանակով ընտրության արդյունքում կնքվել է 46 պայմանագիր` 2.41 մլրդ դրամի կամ շուրջ 6.55 մլն ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքի չափով: Հաշվետու տարում համայնքներում իրականացվող ծրագրերից 56-ում ավարտվել են շինարարական աշխատանքները, որոնց ընդհանուր արժեքը կազմում է շուրջ 2.95 մլրդ դրամ կամ մոտավորապես 8.1 մլն ԱՄՆ-ի դոլար: Ծրագրերի շահառուները կազմում են մոտավորապես 537.0 հազ. մարդ, իսկ մի շահառուին ընկնող միջին արժեքը` 5491.0 հազ. դրամ: Տարեվերջին շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ էին հիմնադրամի 29 ծրագրում:

2010 թվականի ընթացքում դպրոցական կահույքի մատակարարման համար կնքվել է 5 պայմանագիր` 127.0 մլն դրամ կամ 340.0 հազ. ԱՄՆ-ի դոլար արժեքով, ըստ որոնց 60 դպրոցի հատկացվել է 9056 միավոր դպրոցական կահույք: Դրանից բացի` հիմնադրամի ծրագրերում ընդգրկված 10 գյուղական մշակույթի տների/համայնքի կենտրոնների դահլիճների կահավորման` 2388 փափուկ աթոռների մատակարարման, նպատակով կնքվել է մի պայմանագիր` 94.5 մլն դրամ կամ 245.0 հազ. ԱՄՆ-ի դոլար արժեքով:

Այնուհետև նա ներկայացրեց համայնքների կողմից ներդրումների կատարման և սվյուռքահայ կազմակերպությունների և անհատների կողմից անհատույց գումարների տրամադրման մասին:

ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանը նշեց նաև, որ 2010 թվականի մարտի 5-ին Հայաստանի Հանրապետության և Համաշխարհային բանկի միջև ստորագրվել է IBRD 78470-AM վարկային համաձայնագիրը, ըստ որի ՀՄՆՀ-ի ծրագրին հատկացվել է 7.0 մլն ԱՄՆ-ի դոլար լրացուցիչ ֆինանսավորում: Այն ուժի մեջ է մտել 2010 թվականի հուլիսի 27-ին: Մինչև 2010 թվականի ավարտը մեկնարկվել է 11 համայնքային ծրագրերի իրականացումը:

Ամփոփելով հաշվետու տարվա կատարողականը՝ ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանը զեկուցեց, որ հիմնական վարկի, առաջին լրացուցիչ և երկրորդ լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում տարվա ընդհանուր պլանը կատարվել է 114 տոկոսով (պլանավորված 7.4 մլն ԱՄՆ-ի դոլարի դիմաց ծախսվել է 8.4 մլն ԱՄՆ-ի դոլար), իսկ շինարարական աշխատանքների գծով՝ 118 տոկոսով (պլանավորված 5.6 մլն ԱՄՆ-ի դոլար դիմաց՝ 6.6 մլն ԱՄՆ-ի դոլար): Միաժամանակ, համեմատելով 2009 թվականի համանման ցուցանիշների հետ, և, չնայած հաշվետու տարվա պլանի գերակատարմանը, կատարողականը նախորդ տարվա համեմատ նվազել է և կազմել 2009 թվականի ցուցանիշների 72 տոկոսը, իսկ շինարարության գծով՝ 64 տոկոսը: Նման ցուցանիշների հիմնական պատճառը միջոցների սղությունն է, և ըստ նրա՝ առկա միջոցները կբավականացնեն միայն արդեն իսկ նախատեսված ծրագրերի համար, և առաջիկա 2-3 ամսից հետո նոր ծրագրեր այլևս չեն լինի:

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել ՀՄՆՀ-ի 3-րդ ծրագրի գործադիր գրասենյակի՝ 2010 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը:

2. Ընթացիկ հարցեր

- 1) ՀՄՆՀ-ի 3-րդ ծրագրի 2011 թվականի ամփոփ բյուջեի և ձեռքբերումների պլանի, պահպանման ծախսերի նախահաշվի և հաստիքացուցակի հաստատման մասին

(Ա. Կիրակոսյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցի 1-ին ենթահարցը զեկուցեց ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանը՝ ամփոփ ներկայացնելով հիմնադրամի 2011 թվականի գործունեության համար նախատեսված բյուջեն, գրասենյակի պահպանման ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը, որոնք ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ համաձայնություն ստանալու համար: Ընդ որում, ՀՀ ֆինանսների նախարարության համաձայնությամբ ներկայացված բյուջեն վարկային միջոցների և ՀՀ կառավարության համաֆինանսավորման միջոցների մասով արդեն իսկ ներառված և հաստատված է ՀՀ

պետական բյուջեի համապատասխան հոդվածներում, իսկ հաստիքացուցակը ոչնչով չի տարբերվում նախորդ տարվա հաստիքացուցակից:

Այնուհետև նա նշեց, որ հիմնական վարկի, առաջին և երկրորդ լրացուցիչ ֆինանսավորումների շրջանակում նախատեսվում է իրականացնել համապատասխանաբար 2.5 մլն, 311.0 հազ. և 6.4 մլն ԱՄՆ-ի դոլարի աշխատանքներ: Ընդհանուր առմամբ, ՀՄՆՀ-ի 3-րդ ծրագրով նախատեսվում է իրականացնել շուրջ 9.3 մլն ԱՄՆ-ի դոլարի աշխատանք, որից 7.7 մլն ԱՄՆ-ի դոլարն ուղղվելու է շինարարական աշխատանքներին: Դրանից բացի՝ առկա միջոցները հիմնականում կծախսվեն ընթացիկ և արդեն ծրագրված աշխատանքների վրա, իսկ առաջիկա 2-3 ամսից նոր ծրագրեր սկսելու համար անհրաժեշտ կլինի հայթայթել լրացուցիչ ֆինանսավորում:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել ՀՄՆՀ-ի հիմնադրամի 2011 թվականի ամփոփ բյուջեն, պահպանման ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը և ձեռքբերումների ընթացիկ պլանը.

2) հանձնարարել ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանին ՀՀ ֆինանսների նախարարության դրական եզրակացությունն ստանալուց հետո ամփոփ բյուջեն ներկայացնել խորհրդի անդամներին՝ ի գիտություն:

2) ՀՄՆՀ-ի աուդիտի արդյունքների մասին

(Ա. Կիրակոսյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի 2-րդ հարցի 2-րդ ենթահարցը զեկուցեց ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանը՝ ներկայացնելով ՀՀ կառավարության աշխատակազմի աուդիտորի ներկայացրած հետևյալ երկու առաջարկները՝

1) դեռևս ՀՄՆՀ-ի 2-րդ ծրագրից մնացած դեֆիտորական և կրեդիտորական պարտավորությունները որպես անհուսալի պարտք ճանաչելը.

2) համայնքային ներդրումներ աղբյուրի ազատ միջոցները որպես ավանդ դնելու և դրանց դիմաց շահույթ ստանալու հնարավորությունը, որը հետագայում Խորհրդի որոշմամբ կարող է ուղղվել հիմնադրամի գործունեության այլ ոլորտներին:

Նա ներկայացրեց նաև համայնքային ներդրումների հետ կապված մեկ այլ առաջարկ: Այսինքն, բացի համայնքներից, ծրագրերի ավելի, քան 50 տոկոսն աջակցություն է ստանում հիմնականում սփյուռքահայ բարերարների կողմից: Արդյունքում տնտեսվում են որոշակի

միջոցներ, որոնք խորհրդի համաձայնությամբ կարելի է օգտագործել այլ՝ ֆինանսապես անկարող համայնքների անունից լրիվ կամ մասնակի ներդրում կատարելու համար:

ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանը նաև առաջարկեց վերանայել համայնքային ներդրումների չափը՝ ակնկալվող 3-րդ լրացուցիչ ֆինանսավորման շրջանակներում՝

1) մշակույթի տների և համայնքային կենտրոնների ներդրման տոկոսը բարձրացնել մինչև 20 տոկոս.

2) դպրոցական ծրագրերի ներդրման տոկոսը խիստ խոցելի և խոցելի համայնքներում թողնել միջինը 5 տոկոս, իսկ նվազ խոցելի համայնքների համար՝ 10 տոկոս: Դա հնարավոր կդարձնի իրականացնել ավելի շատ սոցիալական ծրագրեր՝ ծերանոցներ, մանկատներ՝ տոկոսների ներդրումով:

Այնուհետև առաջարկվեց խորհրդի կազմում կատարել փոփոխություն՝ նկատի առնելով այն հանգամանքը, որ Երևանում նոր ծրագրեր չեն իրականացվելու: Խորհրդի հավանության պարագայում տվյալ հարցը կներկայացվի Համաշխարհային բանկին՝ 3-րդ լրացուցիչ ֆինանսավորման բանակցությունների ընթացքում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ա. Գրիգորյանն առաջարկեց հավանություն տալ ներդրումների չափերի վերանայման առաջարկին, նշելով, որ Գյումրիում, Վանաձորում և այլուր կան բազմաթիվ գիշերօթիկներ և ծերանոցներ, որոնք վերանորոգման և ջեռուցման հրատապ կարիք ունեն, սակայն ՀՀ 2011 թվականի պետական բյուջեում այդ ծախսերը չեն նախատեսվել:

ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանը նշեց, որ՝

1) ցանկացած աուդիտի արդյունքի ներկայացման ժամանակ խիստ պարտադիր է աուդիտորի ներկայությունը և նաև՝ աուդիտորի կողմից ներկայացված եզրակացությունը.

2) խորհրդի նիստերի օրակարգերը կազմելիս պետք է հստակ ներկայացվեն օրակարգային հարցերը և կից ներկայացվեն բոլոր փաստաթղթերը:

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՄՆՀ-ի գործադիր տնօրեն Ա. Կիրակոսյանին այսուհետ՝

ա. խորհրդի նիստերի օրակարգերը կազմելիս հստակ ներկայացնել օրակարգային հարցերը՝ կից փաստաթղթերով,

բ. աուդիտի արդյունքների ներկայացման ժամանակ խորհրդի անդամներին ներկայացնել աուդիտորական եզրակացությունը և ապահովել աուդիտորի ներկայությունը,

գ. ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել ՀՄՆՀ-ի առողիտի եզրակացությունը.

2) հաստատել ՀՄՆՀ-ի առողիտի արդյունքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՄՆՀ-Ի ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ

ԱՇՈՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ